

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1(51)
2011 թ.

Գլխավոր խմբագիր՝
Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:*

e-mail: petutyun.irav@gmail.com

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

1.05.2011

Հանձնված է տպագրության

6.06.2011

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 1 (51)
2011 г.

Главный редактор:
Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
зам. главного редактора
Давид Мелконян -
ответственный секретарь

Геворг Даниелян
Гагик Амбарцумян
Артур Вагаршян
Сергей Аракелян
Виген Кочарян

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92
e-mail: petutyun.irav@gmail.com

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 1.05.2011
Подписано к печати 6.06.2011

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քրեական իրավունք եւ դատավարութիւն

Александр Соловьев, Маргарита Токарева

ПРОБЛЕМЫ ПРАВОВОЙ РЕГЛАМЕНТАЦИИ ПОЛНОМОЧИЙ ПРОКУРОРА В ДОСУДЕБНЫХ СТАДИЯХ РОССИЙСКОГО УГОЛОВНОГО ПРОЦЕССА4

Մերգէյ Սարաբյան

ՂԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ EX OFFICIO ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 13

Александр Волеводз, Петр Литвишко

ОСОБЕННОСТИ УПРОЩЕННОГО (УСКОРЕННОГО) УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА ПО ЗАКОНОДАТЕЛЬНОМУ НЕКОТОРЫХ ЕВРОПЕЙСКИХ СТРАН.....21

Արման Սարգսյան

ՁԵՐՔԱԿԱԼՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԸ ՂԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՅՎՈԴՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....37

Քևորգ Բաղդասարյան

ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՁԵՎԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒՄ.....48

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

Տարոն Սիմոնյան

ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍԿԶԲԵԱԿԱՆ ՈՒ ԸՆԹԱՑԻԿ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱՆԿԱՅՈՒՆ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ56

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Եղիշե Կիրակոսյան, Աննա Մաթևոսյան

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ67

Մակար Մելիքյան

ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂՈՒՄ ՀՆԱՐԱԿՈՐ ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ79

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Սարկոսյան

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ, ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԿԱՄ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ88

Գոռ Մովսիսյան

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՐՁ 94

Լիպարիտ Դրմեյան

ՖՐԱՆԶԱՅԶԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ. ՖՐԱՆՇԻԶԱ.....102

Լիլիթ Քամայան

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՊՐԵՏԵՆԶԻՈՆ (ՊԱՀԱՆՋԱՅԻՆ) ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՍՈՐԻԼԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈՒՆԱԴՐՈՒՄՆԵՐՈՒՄ.....111

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ****Եղիշե ԿԻՐԱՎՈՍՅԱԼ**

ՀՀ վարչապետի օգնական, Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի տնօրեն ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ.

ԱճՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱԼ

ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ.

Միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության հիմնահարցը միջազգային իրավունքի կարևոր հիմնախնդիրներից է: Ներկայումս դժվար է պատկերացնել որևէ պետություն, որը կկարողանա գոյատևել մեկուսի՝ առանց միջազգային հանրության հետ հարաբերվելու: Այդ իսկ պատճառով միջազգային իրավունքի կիրառման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն միջպետական հարաբերություններում այն պահպանելուց, այլ նաև միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտներ հանդիսացող պետությունների ազգային իրավական համակարգերի շրջանակում միջազգային իրավական նորմերի իրացումից: Գլոբալացման ներկայիս պայմաններում պետությունների փոխհարաբերության եզրերը ավելի են ընդարձակվում, որը առաջացնում է տվյալ հարաբերությունների իրավական կարգավորման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտություն:

Այնպիսի է, որ նման պայմաններում պետությունների համագործակցությունը կարգավորող հիմնական գործիքը միջազգային իրավունքի առաջնային աղբյուրը՝

միջազգային պայմանագիրն է: Դա էլ պայմանավորում է միջազգային պայմանագրի՝ որպես միջազգային իրավական նորմեր ամրագրող առաջնային գործիքի դերի և նշանակության ուսումնասիրման անհրաժեշտությունը: Իսկ թե ինչպես են ապահովվում միջազգային պայմանագրային պարտավորությունների կատարումը պետության շրջանակներում, արդեն սահմանվում են պետության ներքին օրենսդրական ակտերով, որոնք ոչ միայն որոշում են միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցման եզրերը, այլև պետության կողմից միջազգային պայմանագրերի ապահովման կոնկրետ մեխանիզմները:

Միջազգային պայմանագրային ներպետական գործընթացը սահմանող օրենքների փոփոխման անհրաժեշտություն կարող է առաջանալ հաճախ: Սակայն, օրենսդրի հիմնական խնդիրներից մեկն էլ այն է, որ ընդունված օրենքները լինեն հնարավորինս կատարյալ, իրավական ու կիրառելի և, որ պակաս կարևոր չէ, կայուն:

«ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2007թ. փետրվարի 22-ին: Օրենքում առկա են բազմաթիվ բացեր և վիճահարույց դրույթներ, որոնցից մի քանիսը կփորձենք ներկայացնել սույն հոդվածում: Քանի որ օրենքում առկա խնդիրները և բացթողումները բազմաթիվ են, այստեղ մենք կներկայացնենք միայն միջազգային պայմանագիր հասկացությանը և միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող կազմավորումներին առնչվող հիմնահարցերը և դրանք լուծելու հնարավոր ուղիները:

Համաձայն Վիեննայի կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր պետություն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

իրավասու է կնքելու միջազգային պայմանագիր: Վերջինս միջազգային իրավունքի սուբյեկտների միջազգային իրավասուբյեկտության կարևոր գործոն է:

Ըստ գերմանացի իրավաբան Ֆ. Բերբերի՝ «Միջազգային պայմանագիրը միջազգային իրավունքի առնվազն երկու սուբյեկտների համաձայնեցված կամահայտությունների գիտակցված և կամավոր միավորումն է, որը միտված է իրավահարաբերություններ ստեղծելու, փոփոխելու ու դադարեցնելու»¹: Իսկ անգլիացի իրավաբան Ջ. Ֆիցմորիսը տալիս է միջազգային պայմանագրերի հետևյալ ձևակերպումը. «Միջազգային պայմանագիրը միջազգային համաձայնություն է, որն արտացոլված է միասնական ձևական ակտում (անկախ նրա անվանումից, վերնագրից կամ նշանակությունից), կնքված է այն կողմերի միջև, որոնք բոլորն էլ կամ որոնցից երկուսը միջազգային իրավունքի սուբյեկտներն են, օժտված են միջազգային պայմանագրեր կնքելու միջազգային իրավասուբյեկտությամբ և իրավունակությամբ, որոնց նպատակն է ստեղծել իրավունքներ և պարտականություններ կամ սահմանել միջազգային իրավունքով կարգավորվող հարաբերություններ»²: Նշված հասկացությունները հիմնականում համապատասխանում են Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայով տրված բնորոշմանը, համաձայն որի՝ «միջազգային պայմանագիրը պետությունների միջև գրավոր կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնություն է, անկախ այն բանից, թե այդ համաձայնությունը ներարված է մեկ, երկու կամ մի քանի փոխկապակցված փաստաթղթերում, ինչպես նաև նրա որոշակի անվանումից»: Սուբյեկտային կազմի առումով՝ միջազգային պայմանագիր հասկացության շրջանակներն ընդլայնվեցին 1986 թ. Վիեննայի կոնվենցիայով՝ լրացնելով պայմանագրային իրա-

վասուբյեկտությամբ օժտված կազմավորումների ցանկը միջազգային միջպետական կազմակերպություններով:

Վերը նշվածի հիման վրա կարելի է փաստել, որ «միջազգային պայմանագիր» հասկացությունը պետք է ունենա հետևյալ հիմնարար բաղադրատարրերը՝

1. պայմանագրի կողմերը միջազգային իրավունքի սուբյեկտներ են, որոնք օժտված են **միջազգային իրավասուբյեկտությամբ**³ կամ որպես **նվազագույն պահանջ՝ պիտի օժտված լինեն միջազգային պայմանագիր կնքելու իրավունակությամբ**,

2. միջազգային պայմանագրերը ստեղծում են միջազգային իրավունքի նորմեր, որոնք կողմերի համար առաջացնում են **իրավունքներ և պարտականություններ**,

3. ժամանակակից միջազգային պայմանագիրը **ձևակերպվում է գրավոր**,

4. պայմանագիրը պետք է **կարգավորվի միջազգային իրավունքով**:

Սակայն, շատ դեպքերում պետությունները շեղվում են նշված չափանիշներից՝ տալով միջազգային պայմանագրի կամայական սահմանումներ՝ երբեմն դուրս գալով միջազգային իրավունքի սահմաններից: Նման մոտեցում, ցավոք, որդեգրել է նաև ՀՀ օրենսդիրը:

Ներկայացնենք օրենքի կիրառման հիմքը հանդիսացող հասկացությունների և տարբեր միջազգային իրավական եզրույթների նկատմամբ օրենսդրի ընդունած անհաջող սահմանումներին առնչվող խնդիրներից մի քանիսը:

Նախ, օրենքի խանիճադանջության գործում մեծ դեր է խաղացել օրենքի հիմնական հասկացություններին վերաբերող հոդվածի բացակայությունը: Համակարգային այս բացթողումը զգալիորեն նվազեցնում է օրենքի կիրառման արդյունավետությունը: Նման հոդված, օրինակ, ամրագրված է Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի մասին օրենքում:

Օրենսդիրը միջազգային պայմանագրի բնորոշումը տալիս է 2-րդ հոդվածում, որը

սահմանում է հետևալը. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և միջազգային հանրային իրավունքի նորմերով (այսուհետ՝ միջազգային իրավունք) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավունքի սուբյեկտի, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմակերպության կամ միավորման միջև ստորագրված և սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր դարձած գրավոր համաձայնություն է»:

Այս հոդվածը առաջ է բերում մի շարք վիճահարույց խնդիրներ, որոնց կփորձենք անդրադառնալ ստորև: Օրենքը նույն՝ 2-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ և երրորդ պարբերությունները սահմանում է հետևյալը.

«...Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև ուժի մեջ մտած այն միջազգային պայմանագիրը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է սույն օրենքով և միջազգային իրավունքի նորմերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև սույն օրենքով սահմանված կարգով կնքված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին պայմանագիրը»:

Մեր խորին համոզմամբ, առանձին անդրադառնալ ՀՀ միջազգային պայմանագրերին՝ դրանք «ՀՀ միջազգային պայմանագիր» եզրույթի մեջ ներառելու նպատակով, անհնաստ է: Ջուտ օրենսդրական տեխնիկայի և տարրական տրամաբանության կանոնների տեսանկյունից, անհրաժեշտություն չկա այս դրույթը նախատեսել, քանի որ նույն հոդվածի առաջին մասի առաջին պարբերության մեջ ամրագրված հասկացությունն արդեն իսկ ներառում է բոլոր միջազգային պայմանագրերը, ո-

րոնք Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել: Ավելին, օրենսդիրը, դուրս գալով ներպետական իրավունքի կարգավորման շրջանակներից, 2-րդ հոդված առաջին մասի երրորդ պարբերությամբ սահմանում է. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև սույն օրենքով սահմանված կարգով կնքված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին պայմանագիրը»: Այն հանգամանքը, թե այս կամ այն միջազգային պայմանագրում փոփոխությունների կատարումը ինչ իրավական ձևով պետք է իրականացվի ոչ թե ներպետական, այլ իրավունքի կարգավորման խնդիր է: Նշված դրույթը հակասում է 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 39-րդ հոդվածին, համաձայն որի՝ պայմանագիրը կարող է փոփոխության ենթարկվել կողմերի համաձայնությամբ: Կոնվենցիայի երկրորդ մասի դրույթները, որոնք վերաբերում են պայմանագրի կնքմանը և ուժի մեջ մտնելուն, կիրառվում են նման համաձայնության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Նման դրույթից ակնհայտ է, որ Վիեննայի կոնվենցիան հնարավորություն է ընձեռում փոփոխել պայմանագիրը նաև այսպես կոչված «արտապայմանագրային» եղանակով: Այսպես, խոսելով միջազգային պայմանագրերում կատարվող փոփոխությունների իրավական ձևի մասին՝ ռուս միջազգայնագետ-իրավաբաններ Ա.Ն. Տալալանը և Ն.Վ. Չախարովան մատնանշում են, որ միջազգային իրավունքում գոյություն չունի որևէ նորմ, որը մասնակից պետություններից կպահանջի օգտագործել փոփոխվող պայմանագրի նույն ձևը, անվանումը և մակարդակը: Պայմանագիրը որպես կանոն պարունակում է դրույթներ, որոնք հենց վերաբերում են փոփոխումներ և/կամ լրացումներ կատարելուն: ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը նույնիսկ նախատեսում է միջազգային պայմանագրի փոփոխման բանավոր եղանակ, այդ թվում՝ պետութ-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

յունների պրակտիկայի արդյունքում: Այլ կերպ ասած՝ միջազգային պայմանագրի փոփոխման կարգն ամրագրող դրույթի նախատեսումը նախ անհմաստ է, քանի որ այն դատապարտված է անգործության այն պարզ պատճառաբանությամբ, որ խնդիրը միջազգային իրավունքի կարգավորման առարկա է, երկրորդ՝ գոյություն ունի ակնհայտ անհամապատասխանություն Վիեննայի 1969թ. կոնվենցիայի դրույթի և հիշատակված հոդվածի միջև, իսկ համաձայն 33 Սահմանդրության 6-րդ հոդվածի «դուալիստական» մեկնաբանության՝ նման հակասության պարագայում կիրառման է ենթակա միջազգային պայմանագրային դրույթը: Ավելին, դրույթը պրակտիկ իրավիճակում կարող է առաջացնել բազմաթիվ բարդություններ, հատկապես երբ պայմանագրի մյուս կողմը կիրառում է պայմանագրի փոփոխման առավել պարզեցված ընթացակարգեր: Առաջարկում ենք ընդհանրապես հանել նշված դրույթը և փաստաթուղթը միջազգային պայմանագիր բնորոշելիս ղեկավարվել մայր պայմանագրի դրույթներով կողմերի համաձայնությամբ կամ, դրանց բացակայության դեպքում, միջազգային իրավունքով:

Գտնում ենք, որ առավել խելամիտ կլիներ միջազգային պայմանագիրը բնորոշել՝ հենվելով Վիեննայի 1969թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածում տրված բնորոշման վրա: Առավել ևս, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պետությունների մեծ մասի՝ Ավստրալիայի, Կանադայի, Չիլիի, Չինաստանի, Կոլումբիայի, Եգիպտոսի, Գերմանիայի, Ճապոնիայի, Մեքսիկայի, Նիդերլանդների, Ռուսաստանի, Շվեյցարիայի, Միացյալ Թագավորության և այլ պետությունների ներպետական օրենսդրության մեջ տրված «միջազգային պայմանագիր» եզրույթի բնորոշումը հիմնականում համապատասխանում է Վիեննայի կոնվենցիայում ամրագրված սահմանմանը⁵:

Նշվածից զատ՝ 2-րդ հոդվածի առաջին մասում «ստորագրված» եզրույթի փոխարեն առաջարկում ենք «կնքված» բառը, քանի որ հնարավոր են իրավիճակներ, երբ պայմանագիրը չանցնի ստորագրման փուլ: Խոսքը մասնավորապես պայմանագրին միանալու մասին է: Այդ իսկ պատճառով «կնքում» տերմինն այս պարագայում իրավական տեսանկյունից ավելի ճիշտ է, քանի որ պայմանագիրը ամեն դեպքում անցնելու է կնքման փուլերից որևէ մեկը:

2-րդ հոդվածում օգտագործվում է «միջազգային իրավունքի սուբյեկտ» կապակցությունը, սակայն օրենքը չի տալիս այդ եզրույթի հստակ սահմանում: «Միջազգային իրավունքի սուբյեկտ» եզրույթը վիճելի գիտական կատեգորիա է, տեսական աղբյուրներում մինչև օրս շարունակվում են վեճերը այս հարցի կապակցությամբ: Դեղինակների մի խումբ, հատկապես հաշվի առնելով միջազգային իրավական վերջին զարգացումները միջազգային քրեական տրիբունալների ստեղծման և գործունեության վերաբերյալ, գտնում է, որ միջազգային իրավունքի սուբյեկտ է հանդիսանում նաև ֆիզիկական անձը⁶: Եթե հիմք ընդունենք այս մոտեցումը, ապա, օրենսդրի որդեգրած տրամաբանությունը հաշվի առնելով, կարող ենք պնդել, որ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի մյուս կողմ են հանդիսանում նաև ֆիզիկական անձինք:

Այսպիսով, ակնհայտ է, որ «միջազգային իրավունքի սուբյեկտ» հասկացությունը կիրառելու դեպքում անհրաժեշտ է հստակորեն ամրագրել դրա սահմանումը, քանզի դրա բացակայությունը կարող է առաջ բերել է օրենքի դրույթների տարրնկալման խնդիրներ: Նշված մտահոգությունն ակնհայտ է դառնում, օրինակ, հոդված 6-ի 1-ին մասի երկրորդ պարբերության հետևյալ ձևակերպմամբ. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի մյուս կողմից հանդես եկող սուբյեկտներ կարող են լինել միջազգային իրավունքի սուբյեկտները՝ օտարերկրյա

պետությունները, միջազգային կազմակերպությունները, միջազգային իրավունքի այլ սուբյեկտները, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմավորումները»: Ակնհայտ է, որ օրենսդիրը «միջազգային իրավունքի այլ սուբյեկտներ» հասկացության բովանդակությունը պարզաբանելու համար պետք է հղում կատարի դոկտրինային, ինչը, ինչպես արդեն նշվեց, միանշանակ պատասխան չի տալիս այդ հարցին և հետևաբար կարող է առաջ բերել ավելորդ բարդություններ պրակտիկայում:

Անհրաժեշտ է փաստել, որ արդի միջազգային իրավունքում իրակավական հստակ կարգավորում են ստացել միայն պետությունների և միջազգային միջպետական կազմակերպությունների միջև կնքվող միջազգային պայմանագրերը՝ 1969թ. և 1986թթ. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիաները: Միջազգային իրավունքի այլ սուբյեկտների կամ այն կազմավորումների, որոնց միջազգային իրավասուբյեկտությունը կասկածի տակ է դրվում, միջազգային պայմանագրային իրավունակության մասին միանշանակ դատողություններ դեռևս գոյություն չունեն: Իհարկե, կարելի է օրենսդրությունը որոշ առումով համարել առաջադիմական, քանի որ այնտեղ փորձ է կատարվում դյուրին լուծում տալու միջազգային իրավունքի բարդ հիմնախնդիրներին, սակայն հարցն այն է, որ դա է օրենսդրության կարգավորման առարկան չէ, ավելին՝ է օրենսդիրը չի հետապնդում նման խնդիր: Օրենքի կարգավորման առարկայի տեսանկյունից պարզապես անհրաժեշտ է «միջազգային իրավունքի սուբյեկտ» հասկացությունն օգտագործելիս հստակ թվարկել այն կազմավորումները, որոնք օրենքի նպատակների համար համարվում են այդպիսին:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ գտնում ենք, որ հոդված 2-ի առաջին մասը հարկավոր է վերախմբագրել հետևյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը միջազգային իրավունքով և սույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների՝ պետության, միջազգային միջպետական կազմակերպության, ինչպես նաև սույն օրենքով որպես Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի սուբյեկտ նախատեսված այլ կազմավորումների միջև կնքված և սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած գրավոր համաձայնությունն է, որը պայմանագրի կողմերի համար սահմանում է իրավունքներ և պարտականություններ, փոփոխում կամ դադարեցնում է դրանք»:

Որպես այլընտրանք առաջարկում ենք նույն հոդվածի հետևյալ խմբագրությունը.

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը միջազգային իրավունքով և սույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների՝ պետության, միջազգային միջպետական կազմակերպության, ինչպես նաև միջազգային իրավունքի համաձայն միջազգային պայմանագիր կնքելու իրավունակություն ունեցող կազմավորման միջև կնքված և սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած գրավոր համաձայնությունն է, որը պայմանագրի կողմերի համար սահմանում է իրավունքներ և պարտականություններ, փոփոխում և/կամ դադարեցնում է դրանք»:

Վերջին տարբերակը առավել ճկուն մտեցնում է, քանզի հնարավորություն է ընձեռում չսահմանափակվելու օրենսդրական քարացած թվարկմամբ և կողմի պայմանագրային իրավունակության հարցի լուծումը որոշելու միջազգային իրավունքի հիման վրա, ինչը հնարավորություն կտա նաև հաշվի առնելու միջազգային-իրավական նոր զարգացումները:

Շարունակելով «միջազգային պայմանագիր» եզրույթի սահմանմանն առնչվող հիմնախնդրի քննարկումը՝ պետք է նշել,

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

որ բավական վիճահարույց է նաև հողված 2-ի կետ 3-ով սահմանված դրույթը, համաձայն որի՝ միջազգային պայմանագիր չի համարվում վարչական կամ տեխնիկական կամ կազմակերպչական կամ որևէ այլ համանման հարցեր կարգավորող այն պայմանագիրը, որը թեև կնքված է միջազգային պայմանագրի սուբյեկտների միջև և նրանց համար սահմանում է իրավունքներ և պարտականություններ, փոփոխում կամ դադարեցնում է դրանք, սակայն միանգամայն կամ որոշակի ժամկետով կիրառման նպատակ հետապնդելու պատճառով անմիջապես դադարեցնում է իր գործողությունը կամ հետապնդում է բուն միջազգային պայմանագրի կնքմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու նպատակ:

Խնդիրն այն է, որ օրենսդիրը միևնույն՝ միջազգային պայմանագիր հասկացության բնորոշման համար կիրառում է երկակի ստանդարտներ, ինչը առհասարակ հակասում է միջազգային իրավունքում ընդունված միջազգային պայմանագիր հասկացությանը: Ինչպես արդեն վերը նշվեց, միջազգային իրավունքի համաձայն՝ «միջազգային պայմանագիր» հասկացությունը բնորոշելիս առանձնացվում են հետևյալ հիմնական չափանիշները. 1. **միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված լինելը**⁷, 2. **իրավունքներ և պարտականությունների ստեղծում** կողմերի համար, 3. որպես կանոն՝ **գրավոր ձևակերպում**, 4. պայմանագիրը պետք է **կարգավորվի միջազգային իրավունքով**:

Վերը հիշատակված դրույթը հավանաբար նպատակ է հետապնդում առանձնացնելու այն փաստաթղթերը, որոնք «չեն կարգավորվում միջազգային իրավունքով»: Սակայն, նման ձևակերպումը ոչ թե օժանդակում է նշված չափանիշը մանրամասնելուն, այլև կարող է ստեղծել արհեստական խոչընդոտներ օրենքը կիրառելու

համար:

Բացի այդ՝ հողվածի նույն կետը հետագայում մանրամասնում է այն դեպքերը, որոնց վրա մասնավորապես տարածում է օրենսդրի սույն դրույթը, որը մեր խորին համոզմամբ ավելի է բարդացնում իրավիճակը, քանի որ նման իրավիճակային նկարագրությունները տեղ չպետք է գտնեն օրենքում:

Շարունակելով միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնումը՝ օրենսդիրը 3-րդ հողվածի 4-րդ կետով սահմանում է. «*Չայաստանի Չանրապետության միջազգային պայմանագիրը Չայաստանի Չանրապետության կամ պայմանագրի մյուս կողմի հետ կարող են ստորագրել նաև միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտները՝ իրավաբանական անձինք*»: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ պետությունը միջազգային իրավահարաբերություններում կարող է հանդես գալ ոչ միայն որպես միջազգային հանրային իրավունքի սուբյեկտ, այլ նաև ներպետական, մասնավոր իրավունքի սուբյեկտ: Նման դեպքում, պայմանագրերը նույնիսկ պետությունների միջև չեն համարվի միջազգային պայմանագրեր⁸:

Գտնում ենք, որ մասնավոր իրավունքի սուբյեկտներին որպես միջազգային պայմանագրի կողմ դիտելը չի համապատասխանում Վիեննայի կոնվենցիայով միջազգային պայմանագրին ներկայացվող մեկ այլ չափանիշի՝ **կարգավորվել միջազգային իրավունքով** (*governed by international law*): Իսկ վեջինս նշանակում է, որ պայմանագիրը պետք է իրավունքներ և պարտականություններ ստեղծի կողմերի համար միջազգային իրավունքի հիման վրա, այլ ոչ թե ներպետական իրավունքի⁹: ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի համաձայն՝ «կարգավորվում է միջազգային իրավունքով» արտահայտությունը նպատակ ունի տարբերակել միջազգային հանրային իրավունքով կարգավորող պայմանագրերը այն պայմանագրերից, որոնք

թեև կնքված են պետությունների միջև, սակայն կարգավորվում են ներպետական իրավունքով¹⁰: Իսկ մասնավոր իրավունքի ուղրտի պայմանագրերը կամ ավելի կոնկրետ՝ կոնտրակտները, որպես կանոն, հղում են կատարում այս կամ պետության ներքին իրավունքին¹¹: Այսպիսով, անհրաժեշտ է հստակ տարբերակել միջազգային պայմանագրերը կոնտրակտներից, և պետք է ընգծել, որ վերջիններս դուրս են օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից: Մի շարք պետությունների ներպետական օրենսդրության մեջ նման տարբերակում առկա է: Այսպես, Ավստրիայի օրենսդրությամբ սահմանվում է, որ պետությունը կարող է հանդիսանալ միջազգային մասնավոր իրավական կոնտրակտների կողմ, որի դեպքում կոնտրակտը ստորագրում է համապատասխան նախարարը: Ըստ Ավստրիայի օրենսդրության՝ **նշված կոնտրակտները տարբերվում են միջազգային պայմանագրերից, քանի որ առաջինները չեն շոշափում պետական իշխանությունը, այլ միայն վերաբերում են մասնավոր իրավունքների**¹²: Հետևաբար, անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ՝ միջազգային մասնավոր իրավունքի ուղրտի պայմանագրերը միջազգային պայմանագրից սահմանազատելու և դրանց համար առանձին կարգավորում նախատեսելու համար:

Օրենսդիրը, վերը նշվածից զատ, ավելի է ընդլայնում պայմանագիր կնքելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը: Այսպես, վերջին փոփոխությունների հետևանքով օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կողմ կարող են լինել նաև խաղաղության, մարդու իրավունքների պաշտպանության, հումանիտար կամ ֆինանսատնտեսական աջակցության ուղրտներին առնչվող հարցերով՝ միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող կամ որպես այդպիսին չճանաչ-

ված կազմավորումները»:

Նախ, անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ միջազգային պայմանագիր կնքելու իրավունակություն ունեցող սուբյեկտների շրջանակի կարգավորման խնդիրը պետք է լուծվի միջազգային իրավունքի տեսանկյունից և ոչ թե ազգային իրավական համակարգով: Այն դեպքում, երբ պետությունը իր ներպետական օրենսդրությամբ փորձ է կատարում կարգավորելու նման բնույթի հարցեր, ապա դա միայն կարող է ունենալ ներպետական ազդեցություն և ոչ մի դեպքում՝ միջազգային: Ներպետական ազդեցություն ասելով այստեղ առաջին հերթին ի նկատի են առնվում այս կամ այն միջազգային-իրավական փաստաթղթի ներպետական ընթացակարգերի բովանդակությունը և համակարգը:

Առաջին, ենթադրենք, նշված դրույթի հիմնական նպատակն է հնարավորություն ստեղծել խուսափելու անցանկալի քաղաքական հետևանքներից՝ չճանաչված պետությունների կամ այլ նմանատիպ կազմավորումների հետ համագործակցելիս: Այլ կերպ ասած, որպեսզի պայմանագրի կնքման փաստը չդիտվի իբրև տվյալ կազմավորման իրավասուբյեկտության կամ պայմանագրային իրավունակության ճանաչում: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ չճանաչված պետության կամ, ինչպես օրենսդիրն է բնորոշում, «*միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող կամ որպես այդպիսին չճանաչված կազմավորումների*» հետ **միջազգային պայմանագիր կնքելու** դեպքում ինքնին այդ փաստը ենթադրում է նշված կազմավորման միջազգային իրավասուբյեկտության կամ առնվազն պայմանագրային իրավունակության ճանաչում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նման փաստաթուղթը դիտվում է իբրև միջազգային պայմանագիր: Այսինքն, ստացվում է, որ քաղաքական տեսանկյունից նման կարգավորման պայմաններում որևիցե փաստաթղթի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

կնքումը չճանաչված պետության կամ այլ կազմավորման հետ առաջ կբերի վերջինիս իրավասությունների կամ առնվազն պայմանագրային իրավունակության ճանաչում:

Մի կարևոր նկատառում ևս. նման իրավիճակներում Հայաստանի Հանրապետության կողմից կարող է ճանաչվել տվյալ կազմավորման միջազգային իրավասությունները, այլ միայն պայմանագրային իրավունակությունը՝ հաշվի առնելով, որ, ինչպես արդեն վերը նշվեց, գոյություն ունեն տարատեսակ կազմավորումներ, որոնք որևէ տրադիցիոն սուբյեկտի բնորոշման շրջանակներում չեն տեղավորվում: Այս առումով հարկ է նկատել, որ այսօր միջազգային իրավունքին հայտի են կազմավորումներ, որոնց պայմանագրային իրավունակությունը ճանաչված է, թեև նրանց իրավասությունները դրվում է կասկածի տակ¹³:

Երկրորդ, եթե խնդիրը դիտարկենք իրավական հարթության մեջ, ապա ակնհայտ է, որ հիշատակված դրույթի առկայությունը «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքում որևէ կերպ չի փոխի նշված իրադրության հնարավոր իրավական հետևանքները, քանզի կնքված փաստաթղթի իրավական նշանակությունը որոշվելու է ոչ թե Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա, այլ միջազգային իրավունքի համաձայն¹⁴: Խնդիրն այն է, որ հետագայում միջազգային վեճերը կարգավորող մարմիններում և ընդհանրապես միջազգային պրակտիկայում վերը նշված փաստաթուղթը դժվար թե դիտվի որպես միջազգային պայմանագիր այն պարզ պատճառով, որ համապատասխան դատական մարմնի, միջազգային կազմակերպության կամ այլ միջազգային կառույցի կողմից վիճելի փաստաթղթի գնահատումը կատարվելու է միջազգային իրավունքին համապատասխան: Իսկ ՀՀ օ-

րենսդրի մոտեցումը նույն հարցի նկատմամբ չի համընկնում միջազգային իրավունքում առկա կարգավորման հետ, ինչն իր հերթին նշանակում է, որ այդ փաստաթղթի վրա անհրաժեշտության դեպքում որպես միջազգային պարտավորությունների և իրավունքների ծագման հիմք հղում կատարելը հնարավոր չի լինի¹⁵:

Հաշվի առնելով վերը շարադրված հանգամանքները՝ 6-րդ հոդվածի քննարկվող մասի ձևակերպումը կարելի է վերափոխել միջազգային իրավունքի վրա հղում կատարելով, այսպես.

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի կողմ կարող են հանդիսանալ նաև այն կազմավորումները, որոնց պայմանագրային իրավունակությունը ճանաչված է ժամանակակից միջազգային իրավունքում»:

Իսկ ինչպե՞ս են կարգավորում այս խնդիրը պետություններն իրենց ներպետական օրենսդրությամբ: Այս հարցի առնչությամբ առկա միջազգային պրակտիկան վկայում է այն մասին, որ պետությունների ներպետական օրենսդրություններում չեն ներառում նման դրույթներ¹⁶, ինչպես դա արվել է ՀՀ օրենքում: Մեր կարծիքով դա լիովին տրամաբանական է, քանզի ներպետական իրավունքով այս հարցը կարգավորելը որևէ գործուն կիրառություն չի ունենալու: Եթե խնդիրը չճանաչված կազմավորմանը որպես պետություն չճանաչելու մեջ է, ապա դա առավել դյուրին կարելի է կատարել բուն փաստաթղթում՝ պայմանագրում ներառված ձևակերպումներով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային պրակտիկայում արդեն իսկ առկա են նման «միջանկյալ» իրավական կազուսներ¹⁷:

Ընդհանրացնելով վերը արված վերլուծությունները՝ կարելի է կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները:

Առաջին, հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «միջազգային իրավունքի» սուբյեկտ հասկացության գործածումը օրենքում կարելի է փոխարինել մեկ այլ եզրույթով՝ **«միջազգային պայմանագիր կնքե-**

լու իրավասությունն ունեցող կազմավորում»: Նշված հասկացության ներառումը օրենսդրության մեջ նախ կնպաստի անորոշություններից խուսափելու, քանի որ օրենքը խնդիր չունի որոշել միջազգային իրավասությունների կտրուկ և դրան հարակից այլ հիմնահարցեր: Օրենքի տեսանկյունից կարևոր է միջազգային իրավունքի համաձայն միջազգային պայմանագիր կնքելու տվյալ կազմավորման իրավունակության առկայության հանգամանքը:

Երկրորդ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային բնույթի փաստաթղթեր է կնքում բազմատեսակ միջազգային կազմավորումների հետ, առաջարկում ենք հետևյալ ոչ հակասական մեխանիզմը. օրենքում կարելի է առանձնացնել փոխադարձ գրավոր համաձայնության մի նոր տարատեսակ, որը իր կարգավիճակով **միջազգային պայմանագիր չէ, սակայն անցում է բոլոր ներպետական ընթացակարգերը,** որոնք անհրաժեշտ են միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելու համար: Այդ փաստաթուղթը կարող է անվանվել «միջազգային համաձայնություն», «միջազգային պայմանավորվածություն», «միջազգային կոնտրակտ» և այլն: Նշված փաստաթղթերը կկնքվեն այն կազմավորումների հետ, որոնք **չեն** բավարարում նախորդ պարբերությամբ սահմանված չափանիշը, այն է՝ **ըստ միջազգային իրավունքի իրավասու չեն կնքելու միջազգային պայմանագիր:**

Նշված լուծումները հնարավորություն կտան նախ՝ վերացնելու օրենսդիր մարմնի, ինչպես նաև ՀՀ Նախագահի կողմից իրավականցվող ներպետական վերահսկողության խնդիրները, եթե խոսքը դրամաշնորհների կամ վարկերի մասին է, ինչպես նաև հնարավորություն կտան առավել ճկուն քաղաքականություն դրսևորել ոչ միանշանակ կամ վիճելի կարգավիճակ ունեցող կազմավորումների հետ համագործակցելիս: Նման դասակարգումն առավել տրամաբանական և ճկուն գործիք կհանդիսանա պետության համար՝ արտաքին քաղաքականության բարդ խնդիրներին

արդյունավետ լուծում տալու համար: Նման կառուցակարգի կիրառումը նաև հնարավորություն կտա հետագայում խուսափելու Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված վավերացված միջազգային պայմանագրերի գերակայության սկզբունքի չարաշահումից: Քանի որ օրենքի նշված կարգավորումների պայմաններում Սահմանադրության հետ պոտենցյալ հակասության հավանականությունը չափազանց մեծ է, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ վավերացման գործընթաց են անցնում նաև միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, իրավաբանական անձանց հետ կնքված փաստաթղթերը: Նման պարագայում նաև իրավական կազուս է առաջանում. ոչ կառավարական կազմավորման հետ կնքված փաստաթղթի դրույթները գերակա են Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքի նկատմամբ: Չենք կարծում, որ սա իրավունքի տեսանկյունից կարելի է համաչափ համարել:

Նշվածից զատ՝ առաջարկվող լուծումը համահունչ է միջազգային իրավունքի պահանջներին, և օրենքը կմաքրվի ավելորդ դրույթներից, որոնք անհարկի ծանրացնում են այն՝ սահմանափակելով դրա կիրառման արդյունավետությունը:

Քննարկված բացթողումները հիմնականում բացատրվում են այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունը երիտասարդ պետություն է և չունի բավարար միջազգային իրավական փորձ: Սակայն այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչ է միջազգային պայմանագիրը, ինչպիսի սուբյեկտներ են իրավասու կնքելու, ինչ է վերապահումը կամ հայտարարությունը և այլն, չափազանց կարևոր են: Այս հարցերի առնչությամբ այլ պետությունների հետ վեճեր առաջանալու դեպքում վեճը լուծող մարմինը հղում չի կատարելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը նշված հարցերի պատասխանները փնտրելիս: Այդ իսկ պատճառով այս տիպի միջազգային իրավական խնդիրները ներպետական օրենսդրությամբ կարգավորե-

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

լիս չափազանց անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային իրավունքի էությունը և արդի զարգացումները:

Ներկայացված թերացումները հանդիսանում են հիմնական հայեցակարգային վիճահարույց խնդիրները, սակայն նշված բացթողումներից և անկատարություններից

րից գատ՝ օրենքում առկա են բազմաթիվ այլ անկատարություններ, որոնք իրավակիրառ գործընթացը անհարկի բարդացնում են, որի հիմնական պատճառը օրենքում պատմողական և չափից դուրս նկարագրողական բնույթի նախադասությունների կիրառությունն է: Հետագա գիտական հրապարակումներում մենք կանդրադառնանք նշված թերացումների առավել մանրամասն լուսաբանմանն ու իրավագիտական վերլուծությանը:

¹ Մեջբերումն ըստ Талалаев А.Н., Юридическая природа международного договора. М., 1963, էջ 106:

² Նույն տեղում, էջ 107:

³ Վիեննայի կոնվենցիաներից ոչ մեկը (1969, 1986) չի գործածում «միջազգային իրավունքի սուբյեկտ» հասկացությունը, սակայն արդի միջազգային իրավունքի դոկտրինայում հաճախ է օգտագործվում այս եզրույթը՝ պայմանագրային իրավունակությանը օժտված կազմավորումներին մատնանշելու նպատակով (տես ANTHONY AUST, MODERN TREATY LAW AND PRACTICE. *Second Ed.*, pp. 58-59):

⁴ Венская Конвенция о Праве Международных договоров. Комментарий. Составитель и автор комментариев А.Н. Талаев, отв. ред. Н.В. Захарова. М., 1997, էջ 107:

⁵ St' u Duncan B. Hollis, A Comparative Approach to Treaty Law and Practice, in ANTHONY AUST, MODERN TREATY LAW AND PRACTICE. CAMBRIDGE UNIVERSITY PRESS 2007 NATIONAL TREATY LAW AND PRACTICE (ED. DUNCAN B. HOLLIS, MERRITT R. BLAKESLEE & L. BENJAMIN EDERINGTON), P. 10:

⁶ St' u M.W. Janis, Individuals as Subjects of International Law, 17 *Cornell International Law Journal* 61 (1984); CHRISTOPHER JOYNER, INTERNATIONAL LAW IN THE 21ST CENTURY 23-27:

⁷ Վիեննայի կոնվենցիաներից և ոչ մեկը (1969, 1986) չի գործածում «միջազգային իրավունքի սուբյեկտ» հասկացությունը, սակայն արդի միջազգային իրավունքի դոկտրինայում հաճախ է օգտագործվում այս հասկացությունը՝ պայմանագրային իրավունակությանը օժտված կազմավորումներին մատնանշելու նպատակով (տես ANTHONY AUST, MODERN TREATY LAW AND PRACTICE. *Second Ed.*, pp. 58-59):

⁸ Венская коненция о праве международных договоров. Комментарий, с. 13:

⁹ ANTHONY AUST, op. cit., P. 20;

¹⁰ Yearbook of the International Law Commission 1966, vol. II, A/CN.4/SER. A/1966/Add. 1, P. 189, այնտեղ մասնավորապես ասվում է. "The phrase "governed by international law" serves to distinguish between international agreements regulated by public international law and those which, although concluded between States, are regulated by the national law of one of the parties (or by some other national law system chosen by the parties)...":

¹¹ ANTHONY AUST, op. cit. P. 30.

¹² St' u Franz Cede, Gerhard Hafner, Naitonal Treaty Law and Practice: Republic of Austria, in NATIONAL TREATY LAW AND PRACTICE (ED. DUNCAN B. HOLLIS, MERRITT R. BLAKESLEE & L. BENJAMIN EDERINGTON), pp. 62-63:

¹³ Պետություններից, միջազգային միջպետական կազմակերպություններից միջազգային պրակտիկայում առկա են պայմանագրային փաստացի իրավունակություն ունեող ոչ տրադիցիոն կազմավորումներ: Այսպես, միջազգային պայմանագրային իրավունակությանը օժտված ոչ տրադիցիոն սուբյեկտներից են Կուկի կղզիները և Նիուն (The Cook Islands and Niue), որոնք ինքնակառավարվող տարածքներ են և ունեն ազատ ասոցիացիայի պայմանագիր Նոր Զելանդիայի հետ: Նշված երկու միավորումներն էլ Նոր Զելանդիայի և ՄԱԿ-ի՝ որպես պայմանագրերի ավանդապահի կողմից ճանաչվում են պայմանագրային իրավունակությանը օժտված սուբյեկտներ: Այլ կազմավորումներ՝ Վատիկանը, Թայվանը, Պաղեստինը, Հոնկ Կոնգը և այլն, ևս միջազգային պայմանագրերի կողմեր են, սակայն ոչ բոլոր դեպքերում են նրանք հանդես գալիս որպես պետություն: Այս մասին առավել մանրամասն տես Id. P. 72:

¹⁴ See ANTHONY AUST, *supra* note 18-19:

¹⁵ Սիեռա Լեոնեյի Հատուկ Դատարանը քննել է համանման գործ, երբ պայմանագրի (Lome Agreement) մյուս կողմի պայմանագրային իրավունակության բացակայության, ինչպես նաև միջազգային իրավունքի հիման վրա իրավունքներ և պարտականություններ չստեղծելու փաստի հիման վրա փաստաթուղթը չի համարվել միջազգային պայմանագիր: *Prosecutor against Morris Kallon & Brima Bazzy Kamara*, Decision on Challenge to Jurisdiction: Lome Accord Amnesty, 13 March 2004, Special Court for Sierra Leone, paras. 36-60, ապստամբ կազմավորման պայմանագրային իրավունակության բացակայության մասին քննարկումները տես paras. 45-50:

¹⁶ NATIONAL TREATY LAW AND PRACTICE. ED. BY DUNCAN B. HOLLIS, MERRITT R. BLAKESLEE & L. BENJAMIN EDERINGTON.

¹⁷ Թերևս նման դրույթի առկայությունը կարող է արդարացնել ներպետական իրավական խոչընդոտներից խուսափելու նպատակը: Սակայն մշակած խնդիրը ևս հնարավոր կլինե՞ր լուծել առավել ներդաշնակ իրավական տեխնիկայի միջոցով: Օրենքի մեջ ներառել դրույթ, համաձայն որի՝ միջազգային պայմանագրերի հասկացության սահմանները որոշելիս օրենքը կիրառողները պետք է հաշվի առնեն արդի միջազգային-իրավական զարգացումները, ինչը կլուծեր այս և շատ այլ առկա պոտենցիալ հիմնախնդիրներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ**НЕКОТОРЫЕ ПРИМЕЧАНИЯ О ЗАКОНЕ РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ «О МЕЖДУНАРОДНЫХ ДОГОВОРАХ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»****Егише КИРАКОСЯН**

*к.ю.н., Помощник Премьер Министра
Республики Армения, Директор Центра
международного и сравнительного права,
Ассистент кафедры Европейского и
Международного Права Ереванского
государственного университета*

Анна МАТЕВОСЯН

*к.ю.н., Ассистент Кафедры Европейского и
международного права Ереванского
государственного университета*

В статье обсуждаются проблемы применения «Закона о Международных договорах Республики Армения». В особенности авторы концентрируют внимание на проблеме определения понятия «международный договор» и ее соответствие с общепринятым определением данного понятия в современном международном праве. Авторами детально анализируется вопрос субъектов уполномоченных заключать международные договоры. Согласно по-

ложениям Закона РА «О Международных Договорах РА» круг субъектов уполномоченных заключать международные договоры значительно расширился, что, по мнению авторов не соответствует принципам современного права международных договоров. Для обоснования своей позиций авторы опираются также на практику регулирования указанных вопросов в законодательстве других государств (например- Австрия, Великобритания, Франция, Колумбия, США и т.д.). Особое внимание в статье уделено проблеме полономочия непризнанных государств (формирований) заключать международные договоры. Законодатель включил в состав субъектов имеющих право заключать международные договоры непризнанных государств (формирований), с которым авторы не соглашаются, обосновывая свою позицию тем, что указанный подход законодателя противоречит нормам международного права в общем и права международных договоров в частности.